

ՈՐԴԻՔԸ ԵՒ ՆՈՅԱ ՀԱՅՐԵՐԸ *)

Հին և նոր սերնդի մէջ՝ կեանքի երևոյթները գնահատելիս՝ միշտ եղել է մի տարաձայնութիւն, և այս հասկանալի է։ Հին սերունդը կեանքը գնահատելիս՝ շարունակ աչքի առաջ ունի փորձը—non possumus—այն սահմանափակումները, որ աշխարհը ամէն մի մարդու ձգտմանց առաջ քաշում է։ Նոր սերունդը՝ ընդ հակառակը՝ ամէն բան համարեա բացառապէս իւր ցանկութեանց—volumus—տեսակետից է քննում, և մինչ առաջինը ցանկութեան յառաջ մղող ուժին անվստահութեամբ է վերաբերուում, ձգտում է այն զսպել և փորձից հանած դասին աւելի արժէք, քան որ հարկն էր, վերագրում, երկրորդը, նորը, չափազանց անտես է առնում, արհամարհում է փորձը և գաղափարի նշանակութիւնը գերակշիւ է նորա աչքում։ Սակայն այս տարբերութիւնը՝ նոր և Հին սերունդներին իրար հասկանալու, յարգելու ոչ մի արգելք չէր յարուցել, ոչ էլ ցանկալի էր, որ այդպիսի մի բան գոյութիւն ունենար։ Մի կողմը ապրածի ու տեսածի հեղինակաւոր ծանրութիւնը, միւս կողմը մաքուր ձգտումների կշիռը իրար չափաւորում էր և կեանքի ներդաշնակութիւնը հասարակութեան մէջ պահում։

Բոլորովին այլ յարաբերութիւն է նկատուում մեր ժամանակի սերունդների մէջ։ Հազիւ կարելի է ցոյց տալ մի այլ դարաշրջան, երբ իրարից այնքան հեռացած լինին «հայրերն ու որդիները», քան այսօր։ Ընդհանուր առմամբ շատ թոյլ է նոցա բարոյական կապը. նոքա իրարից զանազանուում են ոչ միայն գործառնութեան միջոցներով, այլ և տարբեր կերպով են պատկերացնում նոյն իսկ գործի նպատակը ու յարաբերութիւնը, որ ծայրից ծար թշնամական է և իրար հակասող։

*) Քաղաւածօրէն «Церк. Вѣст.» № 17-ի առաջնորդից։

Այս մասում պերճախօս վկան դպրոցական յուշագրերը, արձանագրերը և զեկուցումներն են, որ ամբարօւել են վերջին տարիներում թէ հաստատութեանց և թէ լրագրերի մէջ. միայն այս ցաւի մասին են խօսում և ամէն տեսակ դպրոցական տեղեկագրերս Իբր օրինակ վեր առնենք այն «Առաջին համառուսական ուսուցչական և միջնակարգ դպրոցների գործիչների ժողովը» Իմատրայում 1906-ի Փետր. 9 — 11: Այս ժողովի արձանագրութիւնը, որ չի կարելի միակողմանի կամ աչառու համարել, մանաւանդ թէ յօգուտ հին սերնդի վերաբերմամբ:

Զեկուցագրերից շատերը պնդում էին այն աշակերտապետութեան և ազօր հետ կապուած արտառոց վարժունքների մասին: Տեղ տեղ ստորին դասարանի աշակերտները սկսկսել են քշել իրենց ուսուցիչներին դասարաններից և վարչութեան կարգադրութեանց դէմ բողոքել: Ուրիշ պատգամաւորներ հաստատում էին, որ միջնակարգ դպրոցի աշակերտները շատ յաճախ անվստահութիւն են ցոյց տուել իրենց ծնողների ժողովներին և որպէս զի հասնեն իրենց ցանկութեան, կազմել են յատուկ «Համառուսական աշակերտաց դաշնակցութիւնը»: Ըստ երևոյթին էլ առաջ գնալու տեղ չի մնացել:

Արձանագրութեանց մեծ մասը գլխաւորաբար աշխարհիկ դպրոցների մասին է. որովհետեւ ուրիշ հաստատութիւններից ներկայացուցիչներ չեն եղել այն ժողովում: Բայց բոլորիս էլ յայտնի է, որ հոգեւոր դպրոցներում գործը աւելի լաւ պայմանների մէջ չէ, ոչ միայն արական այլ և իգական դպրոցները աշակերտապետութեան յայտնի ապացոյցներ են տալիս. հարկաւ (վերջիններում աւելի նուազ չափով): Այս անկարգութեանց և քառասական վիճակի մասին որքան ուզէք նիւթ՝ առատութեամբ կգտնէք Իմատրայի ժողովների արձանագրութեանց մէջ:

Ի՞նչպէս նայել այս երևոյթին. ի՞նչպէս գնահատել. կամ վերջապէս ի՞նչ պատճառների վերադրել այս անծայր և անմիտ յուզմունքները: Արդեօք համարել այն մի-

լուսաւոր ապագայի սաղմերը, աշդեօք նոր և շաւղոյն արշալոյսն է աւելի բաղդաւոր կեանքի, թէ այդ մի ինքն ըստ ինքեան ոչինչ լաւ բան չխոստացող, անբնական զարգացման ծնունդ է և հետեանք հասարակական կեանքի բարոյական անկման:

Հին և նոր սերնդի այս տարաձայնութեան առթիւ զանազան հայեացքներ կան, որ երկու հիմնական տեսութեանց կարելի է վերածել: Կան մարդիկ, որ աշակերտական շարժման մէջ տեսնում են մի բնական հակադդեցութիւն երիտասարդների կողմից, ուղղուած Հին սերնդի սովորութեանց դէմ, մի ձգտում դէպի լուսագոյնը և վսեմը, բոյական պահանջների մի առողջ ծնունդ, ծնունդ նոր Ռուսաստանի ազատասէր, անկեղծ և ջերմագին:

Միւսները, մեծամասնութիւնը, ընդհակառակը միջնակարգ դպրոցների աշակերտաց ձգտումը դէպի ինքնավարութիւն՝ համարում են բարոյական անկման նշան, դաւաճանութիւն մեր լաւ անցեալի դէմ և ապագայի վատ նշան: Այս վերջին կարծիքին են ծնողներից շատ շատերը և փորձառու դաստիարակները: Նոքա ապշած հեռեւում են իրենց որդոց դատողութեան ու գործին և հաստատում են, որ նոցա (որդոց) հոգեբանութիւնը բոլորովին խորթ է իրենց (ծնողաց և դաստիարակաց) համար և նոցա մէջ (որդոց ու ծնողաց) այլ ևս չփման և հաղորդակցութեան ոչ մի կէտ չի մնացել, վերացել է:

Հայրերի և որդոց միջի այս տարաձայնութիւնը բացատրում են համարեա ամբողջովին երեխաների վերայ եղած դրսի, կողմնակի ազդեցութեամբ օրը եկել է, Աստուած գիտէ, որանդից և անզգալաբար փչացնում է նոցա, բարոյապէս խանդարում է ամենայն կարգ և կանոն և խաղաղ կեանքը դարձնում է արկածալից, աղմկաւոր: Սակայն այստեղ մի թիւրիմացութիւն, մի սխալ կայ, որ պէտք է լուսաբանել:

Միջնակարգ դպրոցներում աշակերտաց յուզումը սկսուեցաւ հասարակաց շարժման հետ և սերտ կապ ունի

վերջինիս հետ: Այս մի բարեյաջող հանգամանք է, ըստ երևոյթին, և խոստանում է լաւ ապագայ: Բայց հարկ չկայ աչք փակել այն իրողութեան առաջ, որ միջնակարգ դպրոցների աշակերտական խլրտումները՝ նախ քան հոկտեմբերի 17-ը և յետոյ էլ՝ շատ սուր կերպով տարբերում են իրարից թէ իրենց նպատակով և թէ բնոյթով. նոյնը պէտք է ասել և աւելի յետին ժամանակներս շաբունակողների մասին ընդհանրապէս:

Մեր վերիւր յիշած Իմատրայի ժողովում նիժնի նովգորոդի պատգամաւորը ասում է, որ աշակերտները սկսել են խռովութիւն և խայտառակութիւններ ստրբել ամեն մի անբաւարար թուանշանի համար և թէ աշակերտները նոյն իսկ իրենց խոստովանութեամբ ծուլացել, անհոգացել են՝ յաճախ կրկնուող աղմուկների և դատադուլների շնորհիւ: Շատ ժամանակ չէ անցել, որ լրագիրները հաղորդեցին թէ ինչպէս աշակերտները այլանդակ դուարձութիւնների մէջ բաւականութիւն են փնտրում և ի չարը են գործ դնում՝ աշակերտական միութիւնը, Նահանգական քաղաքում, Օրլովում, Կազմել են «Գարեջրի ընկերութիւն» որի նպատակն է այդ խմիչքով և անբարոյական խառնակութեամբ յագեցնել իրենց դժգոհութիւնը կեանքից: Առ հասարակ աշակերտական շարժման այն գաղափարական լուսաբանութիւնները և տեսութիւնները, որ իբր մխիթարական երևոյթ փառաբանում են սմանք, աւելի երեւակայութեան արդիւնք են, քան թէ լուրջ ուսումնասիրութեան և համապատասխան չեն մուայլ իրականութեան: Ճշգրիտ պատկերը շատ հակակրելի կողմեր ունի և չափազանց հեռի բարոյական բնաւորութիւն կրելուց: Ինքն ըստ ինքեան հոսկանալի է, որ այս բանը ապագայ հայրենիքի համար շատ վատ նշան է, որ ոչինչ մխիթարական բան չի խոստանում:

Մենք այնպիսի օրերումն ենք ապրում, որ թէ մասնաւոր կեանքի, թէ հասարակական, թէ միջազգային յարաբերութեանց մէջ լարուած գործունէութիւն և ոգեւորութիւն է պահանջուում և յաղթանակը նորանն է, որ

անսասան հաւատ ունի իւր գործի վերայ և տոկուն ու անդուլ աշխատանքս Այսպիսի կեանքի համար անպէտք է մի սերունդ, որ կրթուում է անգործութեան կամայականութեան գրկում. առանց կամքի կրթութիւն, առանց հաստատուն և որոշ սկզբունքների՝ կտրուած պատմութիւնից. մի խօսքով անկայուն հոգեբանութեամբ, Այս տեղ այլ ևս ոչ մի յաջողութեան յոյս չկայ, նոյն իսկ այս տեսակ անհատներից կազմուած հասարակութիւնը, ոչ թէ ոյժ, զօրութիւն է ներկայացնում, այլ տկարութիւն և անընդունակ իւր առանին գործերը կարգաւորելու, զուրկ ոգևորող անհատներից և պիտի ընկնի անհաւասար մրցման մէջ՝ յաղթուած և թշուառ: Ահա այն տխուր հեռանկարը, որ բաց է անում մեր առաջ այս ինքնավար սերունդը:

Սակայն ճշմարտութիւնից հեռի է և այն հայրերի և դաստիարակների կարծիքը, որ այս յուզմանը պատճառ համարում են միայն արտաքին ազդեցութիւնը և աչք են փակում այն հոգեւոր կապի առաջ, որով «Հինը» և «Նորը» միացած են: «Հայրերը» ի գուր են կարծում, որ կատարուած շիւթութիւնը մեքենայական ձևով է յառաջ եկել. այլ «հարբ զազսիս կերան և տտամունք որդոցն առան», «Նոր սերունդը» մարմին ի մարմնոյ նոցա է և արիւն՝ յարենէս: Ամենից առաջ հայրերն են մեղաւոր այն բոլորի համար, որ կատարուել է և կատարուում է. ժամանակիս դպրոցական բոլոր չարիքների յանցանքը ամենից առաջ ընկնում է «հայրերի» վերայ:

Գլխաւորապէս նոքա են պատրաստել այն հողը, որ բուսցնում է ամէն տեսակ անընական երևոյթների և բարոյական քայքայիչ պտուղներ տալիս: Նոքա են առաջին մեղաւորը, որ դպրոցը կորցրել է թէ իւր զսպող և յառաջ մղող զօրութիւնը: Ովքեր են ժամանակիս «հայրերը», ինչ իդէալներով թեւոկոխել են կեանք, ինչ նպատակների ծառայել:

Յայտնի է, որ անցեալ դարու վերջին քառորդի մեռեալ շրջանը շատ վատ ազդեց կատարեալ, բարոյական

և եռանդուն բնաւորութիւն յառաջացնող պայմանների վերայ, Լայն ձեռներեցութիւն, ինքնագործունէութիւն, մարդկային արժանեաց հաւատարմութիւն, պարտուց զգացմունք, մի խօսքով այն ամէնը, ինչ որ կազմում է բնորոշ գծեր ազատ և բարոյապէս անկախ անձնաւորութիւն՝ մեզանում ամէն կերպ ճնշուում էին երբեմն ամէն տեսակ շոյողութեամբ, կաշառք, աստիճաններ, շքանշաններ, արտօնէութիւններ և տիտղոսներ չռայլելով, երբեմն երկիւղով և սպառնալիքով՝ նայնպէս ամէն տեսակի՝ սկսած նշանաւոր Յորդ կետից և վերջացնելով բանտով, բեռային երկրներ աքսորելով, Մի և նոյն ժամանակ դիտաւորեալ թէ առանց դիտաւորութեան ամէն կերպ քաջալերութիւն մատուցանում Մոլչալիների (Горе отъ Яма հերոսի) տիպի ներկայացուցիչներին, գռեհիկ իդէալների տէր անձանց, ամէն տեսակ կասկածամիտ մարդկանց, անմիջական շահը ամէն բանից բարձր դասողներին և նիւթապաշտներին:

Յիշենք թէ ինչ էր գրում այս առթիւ վերջին պատերազմի ժամանակ հանգուցեալ Մ. Ի. Դրագոմիրովը, որի վերայ, ինչպէս բիւրոկրատիայի գասին պատկանող անհատի, չի կարելի կասկած տանել ոչ կրքի և ոչ էլ անգիտութեան համար: Նա շատ լաւ ճանաչում է իւր շրջապատը, երբ հարց տուին թէ ինչո՞ւ ոչ մի տաղանտաւոր մաշկ չերկաց Արեւելեան այս կռուում Ռուսաց կողմից, այն ինչ ճապոնացիք տասնեակներով հերոսներ տուին պատմութեան, պատասխանեց, «Ամէն տաղանտ, ուրեմն և ինքնուրոյնը, մեզանում չարունակ մղուած է եղել յետին շարքերը և այնտեղ ճնշուել ու բոլորովին ոչնչացել»:

Այսպէս ուրեմն մեզանում կեանքի կարգադրիչները եղել են անձինք կասկածելի բարոյական արժանիքներով, որոնց ամէն մի գործին կպչելը ձգել է անոր բարոյական արժանիքը և առաջ է քաշել երկրորդական կողմերը՝ սպանելով գլխաւորը, Գալով սովորական քաղաքացուն՝ կառավարողների բարոյական ախտը անցել է և կառա-

վարողներին և տուել իւր թունաւոր պտուղը:

Այս ախտով վարակուած հասարակութիւնը շատ սիրուն դուրս է բերել հանգուցեալ Ա. Պ. Չեխով իւր բազմաթիւ վէպերի և վէպիկների մէջ, ուր բոլոր դասակարգերից էլ այդ անգոյն, առանց սկզբունքի և դաւանանքի անձինք՝ կաղմում են իսկապէս այն «հայրեր»ը, որոց ծրնունդն է ժամանակիս մատաղ սերունդը:

Եւ այսպէս այն դործը, որ պահանջում էր յատկապէս մաքուր ձեռք, յանձնուեցաւ այնպիսիներին, որոնք ոտք են դրել հասարակական ասպարէզ բարձրագոյն շարժիչ գաղափարներ մերժելով և արտաքին յաջողութեան Աստուծուն «երկիրպագանելով»*):

Եթէ ի նկատի առնենք այս բոլորը, յուսամք թէ հասկանալի կլինի և պարզ՝ անկողմնապահ հանգիստեցող համար՝ որ երիտասարդ սերնդի բարոյական անկայունութեան գաղտնիքը հէնց գաղուած է նոցա «հայրեր»ի մէջ, այն բարոյապէս կիսաւէր հասարակութեան, ուր չնչում և զարգանում է մատաղ սերունդը և որը իւր անհատականութեամբ և գործնականի նիւթապաշտութեամբ ոմանց վերայ ժխտող, տլոց մէջ գնալով համակերպուող ազդեցութիւն է ծնում:

*) Այս հատուածը յիշեցնում է մեր երկու տարուայ դպրոցական հիւանդ կեանքը, երբ հասարակութեան որոշ մասն ու լրագրութիւնը յանուն սխալ հասկացուած ազատամտութեան ամեն կերպով խրախուսում էր աշակերտներին ըմբոստանալ վարչութիւնների և ուսուցիչների դէմ, պաշտպանելով նրանց յաճախ անտեղի պահանջներն ու գործողութիւնները և ներշնչելով արհամարհանք դէպի բարոյական սկզբունքները, կարգապահութիւնը, աշխատանքը: Այսպիսի հասկացողութեան հետեանքն էր այն անպատկառ վերաբերմունքը դէպի ծնողները, ուսուցիչները, հասարակութիւնը, որ բազմաթիւ երեւոյթներով արտայայտուում է կեանքի մէջ և որի մասին միայն վերջին ժամանակներս սկսուեցան բողոքներ արտայայտուել լրագրութեան մէջ: Չպէտք է մոռանանք կեանքի փորձառութեան վերայ հիմնուած գեղեցիկ առածը. «ինչ որ ցանկես, այն կհնձես»:

Ծանօթ. Խմբ.

Հասակաւոր դասը էապէս այն բանով է միայն տարբերուում մատաղ սերնդից, որ ըստ երեւութին արտաքին յարաբերութեանց մէջ աւելի քաղաքավարի է երեւում և աւելի խոհեմ. այն ինչ պատանիները իւրացնելով իրենց հայրերի դատելու և կշռելու կերպը և գալով նոյն բարոյական եղրակացութիւններին (մեծ մասամբ հակաբարոյական և շահամոլ) յախուռն դիմում են իրադործել այն և բոլորովին խճճուում են հակասութեանց մէջ. մուլտուում են, որոնում են՝ հոգմավարուելով լինչպէս առանց կողմնացոյցի անդեկ նաւ, երբեմն տարակուսելով, և շատ անգամ էլ ամենալաւ դիպուածում՝ հաւատը կորցնելով:

Ասածներէս հետեանքը պարզ է: Մեր դպրոցը հիւանդ է. ախտը շատ խորն է թափանցել և տղայոց բարոյական տուողութեան արմատներն է կրծում: Այս՝ բոլորն էլ խոստովանում են. բայց բոլորովին անբնական կերպով են ուզում բժշկել, և շատ անգամ էլ հիւանդութեան արմատներին չեն դիպչում: «Հայրեր»ն ի դուր են կարծում, որ ոչ թէ իրենք, այլ ուրիշներն են, որ արտաքուստ փչացնում են ներկայիս դպրոցական գործը և թէ բաւական է բարձր պարսպով, խոր փոսով շրջապատենք այն, որ հնարաւոր լինի ամէն բան ուղղել, և կըրթութեան գործը իւր խաղաղ ճանապարհով կընթանայ: Որդիքը դարձեալ կսկսեն հնազանդել «Հայրեր»ին և ամէն բանում նոցա ցուցմամբ գործել: «Հայրեր»ը, առաջնորդները, մոռանում են, որ անմատչելի պարսպի յետեւում, խորը փոսով անջատուած՝ դարձեալ իրենք են մնալու մատաղ հոգիների առաջին դաստիարակը օրինակ և նմանութեան առարկայ իրենց բարոյական սնանկութեամբ և այլանդակութեամբ և մտաւորի թուլութեամբ:

Նախ և առաջ ժամանակ է, որ «Հայրեր»ը իրենք բարոյապէս մաքրուեն, դէն ձգեն իրենց անյոյս, հեթանոսական բարոյական կասկածամտութիւնը, հաւատով դառնան ճշմարտութեան և արդարութեան Աստծուն և ձեռք զարնեն վերաշինելու հասարակաց կեանքի պայմանները, որ այսօր այնպէս սպանիչ ազդեցութիւն են

գործում մարդկանց վերայ, ոմանց անմիջապէս անբարոյականացնելով, այլոց՝ հասարակութեան համար անհաշտ թշնամի դարձնելով։ Այն ժամանակ միայն կթարմանայ, կզուարթանայ մեր կեանքի մթնոլորտը, հասարակութիւնը կորբուի այն բորբոսից և ժանգից, որ խաւարի և գիճութեան արդիւնք է. և այն ժամանակ ուսուցչական բեմից կխօսեն մեր երեխայոց հետ իսկապէս անկեղծ և հաւատաւոր մարդիկ. կոչումով ուսուցիչներ և ոչ մամոնայի պաշտօնեայք։ Այն ժամանակ իրենք հայրերն էլ բարոյապէս կբարձրանան իրենց որդոց աչքում և նոցա խօսքը կստանայ այն հեղինակութիւնն ու զօրութիւնը, որ այսօր բոլորովին չունեն։

Ահա ամենից ուղիղ ճանապարհը, բուժիչ միջոցը, որով կարելի է ապագիւնել մեր դպրոցական ախտը և կանսնաւոր յարտաբերութիւն ստեղծել «հայրերւոյի և «որդոց» մէջ։

Ս. Յարութիւնեան.

